



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




Ltin

✓ 2218




1999



ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅՆ ԸՍ ՏԱՐԻԱՆ 114 ԹՈՒՈՅՆ ՄԷՋ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԼԺ ՀԱՏՈՒԼԺԻՆ ՎՐԱՅ

**Ք Ա Ն Ի Մ Ը Խ Օ Ս Ք**



*№ 243*

**Վ Ի Է Ն Ե Ա**

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ց Տ Պ Ա Ր Ա Ն Ը

1854. ՌՅԳ.

9 2218-60

2B 2222



ՄԵՍԻՍ ԼՐԱԳՐՈՅՆ ԱՅՍ ՏԱՐԻԱՆ 114 ԹՈՒՌՈՅՆ ՄԷՋ ՀՐԱ-  
ՏԱՐԱԿՈՒԵԾ ՀԱՏՈՒԵԾԻՆ ՎՐԱՅ ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ:



ՈՐՉԱՓ վէճեր սիրած չենք, որչափ վէճեր սիրելու  
չըլլանք, դիւրաւ չենք կրնար հրաժարել ան առիթ-  
ներէն ալ, որոնցմով հրաւիրուած ենք՝ ամէն կողմանէ  
քուէները նետուելէն ետեւ, գրեթէ երկու խօսք ալ  
մեր կողմանէ հանգանակելու: Այո, շատ չէ որ մէկին  
երկու պատասխանողները բարձրագլուխ պարծեցան,  
բայց թէ որ համարձակութիւն կը տրուի ըսելու՝ մենք  
իրենց գրութեան մէջ՝ մէկ պատասխան տալու նիւթ  
ալ դժուարաւ գտանք:

Գրիչներ փշրել տալու փորձ, ինչպէս կ'ըսուի,  
չըրինք. միայն այսչափ ուզած ենք ու այսչափ կ'ուզենք՝  
որ հակառակորդ ըլլալ ուզողները կամ գրիչնին թուոյ  
թաթխելով չսխալին, եւ կամ անանկ սահման չկոխեն՝  
որ մենք իրենց ետեւէն մտնել չկարենանք: Բայց թէ  
որ աս ալ դատին բնութեան հարկն է, զուարթու-  
թեամբ կը ներենք, ու տրամութեամբ կ'ըսենք. Ն՞նչ կը  
ստիպէ արդեօք աս նոր փետուրներն ալ՝ որ զիրենք Միոնի  
ան ժայռերուն վրայ մաշեցրնեն՝ որոնք ադամանդներ  
բթացուցին:

Պիոս զմեզ թշնամանեց, Պիոս մեր խիղճը վիրա-  
ւորեց, կ'աղաղակէ Ազատ Մասիս: Մենք կ'ըսենք.  
Պիոս իր անուան արժանի գրութիւն մը տուաւ, որուն  
մէջ առաքելական ծանրութիւն, քրիստոնէական հեզու-  
թիւն ու քաղցր օծութիւն մը զգալու համար՝ այնպէս  
կաթուղիկեայ ըլլալ հարկ չկար, ինչպէս շատ բարակ

ճաշակ ունենալ պէտք չէ՝ խմանալու թէ քանի մը լրացրաց հատուածները ինչ լեղի, ինչ ամօթ թափեցին:

Չենք դիտեր՝ աս խմբագիրներն ինչ քանի կը սպասէին: Արդեօք դեռ այնչափ ըմբռնելու հասան՝ որ Պիոս իրեն հետ զանոնք չիկրնար սեպել՝ որոնք իրեն հետ չեն, եւ ոչ զանոնք որդի կանչել՝ որոնք զինքը չայր չեն ճանչնար: Թշնամանք՝ աս անգամ ալ չենք գտներ: Բայց խիղճեր վերաւորուեր են: Ան խիղճերու պատիւ, մեզի՝ ուրախութիւն է, որ դեռ կենդանի, դեռ կեփայեան ձայնին զգայութիւն մը պահեր են. աս վերջն առ ի մահ չէ:

Ինչ խոնարհութիւն է արդեօք՝ որ անոր խօսքերուն մէջ ամբարտաւանութիւն կը գտնէ: Ար կարծե՞ն՝ թէ Պիոս ամէն մէկ սոսկական կաթուղիկեայ հաւատացեալներէն քիչ պարտաւորութիւն ունի՝ զինքը Վրիատոսի փոխանորդ ճանչնալու: Աս պարտքէն այնպէս ինք զինքն՝ ինչպէս ուրիշ զո՞ եւ իցէ տնօրինել չիկրնար, եւ ոչ մէկը կայ՝ որ առաքելական գահուն հնազանդութեան պահպանութիւնն յառաջագէմ ընելու այնչափ խիստ պարտք ունենայ՝ որչափ Պիոս: Վահերիցութեան վարդապետութիւնը Պիոսի բերանը՝ միայն խղճի պատուէր, հաւատոյ գործ, խոնարհ դաւանութիւն է: Վաղայն մենք խոստովանելու չենք դանդաղիր՝ որ շնչաւոր մտածութիւն մը դժուարաւ ան կ'ըմբռնէ՝ որն որ մինակ հոգեպէս կը քննուի<sup>1</sup>:

Բայց հայհոյութիւն է, կ'ըսուի, որ մարդ Աստուծոյ փոխանորդ սեպուի: Ա՛լ, մեր վարդապետութիւնները դեռ որչափ անկատար կը ճանչցուին: Առ զինք՝ ցուցուի մեզի, որ հանգանակնիս կը սահմանէ որ շոտմայ Ապիսկոպոսն Աստուծոյ փոխանորդ դաւանինք:

Հռոմայ եպիսկոպոսը՝ Քրիստոսի փոխանորդ գիտենք ու  
 հարկ է որ գիտնանք: Եթէ Քրիստոս Յիսուս՝ ինչչափ  
 որ Աստուած էր, այնչափ մարդ ալ եղաւ, ինչ զարմանք  
 է՝ եթէ իր եկեղեցւոյն մէջ մէկ կողմանէ իբրեւ Արդի  
 մարդոյ՝ իրեն համագոյակից (բնութենակից) մարդ մը  
 իրեն փոխանորդ այնպէս կարող ու պէտք ըլլայ յերեւելիս  
 ունենալ, ինչպէս մէկալ կողմանէ՝ իբրեւ Արդի  
 Աստուծոյ՝ իրեն համագոյակից Հոգին Սուրբ՝ իրեն յա-  
 ներեւոյթս փոխանորդ ունի: Այն՝ որն որ խոստացած  
 է թէ մինչեւ ցկատարած աշխարհի՝ իր արեամբը փրկած  
 մարդկային սեռին ներկայ ըլլայ, հարկ է որ չէ թէ մի-  
 նակ իբրեւ իր աստուածային Հօրը Միածին, հապա  
 միանգամայն իբրեւ իր մարդկային Վօրն Անդրանիկ՝ ա-  
 նոր ներկայ գտնուի, թէ որ իրօք ոչ միայն Աստուած,  
 հապա միանգամայն մարդ է:

Անշուշտ՝ եթէ մէկը դեռ այն հին ոճին վրայ կը  
 քալէ կամ կը կազայ՝ գրեթէ մի միայն (աստուածային)  
 բնութիւն ի Քրիստոս ընդունելով, չ'իմանար թէ ինչ  
 է մարդկային սեռին յաջորդութեան մէջ Աետրոսի եւ  
 անոր յաջորդներուն վրայ յարատեւած՝ Քրիստոսի  
 մարդկային փոխանորդութիւնը. ինչպէս որ զՀոգին  
 Սուրբ միայն ի Հօրէ բխեալ դաւանող մ'ալ՝ ամենեւ-  
 ին ի վիճակի չէ ըմբռնելու, թէ ինչ է Քրիստոսի  
 Հոգւով Արբով աստուածային փոխանորդութիւնը:

Հռոմէական եկեղեցւոյ վարդապետութիւնները,  
 որովհետեւ կաթոլիկէ եկեղեցւոյ վարդապետութիւն-  
 ներ են, տարանջատ, վայրավատին, պատահական ժողո-  
 վածոյքներ չեն: Հոս եկեղեցւոյ՝ նոյն իսկ իր էութեան  
 վրայ ունեցած վարդապետութիւնն՝ Արրորդութեան ու  
 Մարդեղութեան վարդապետութեանց հետ գրկա-  
 խառն է:

Ուստի կ'ըսենք թէ մարդու մը այսչափ բարձրա-  
նալը՝ դայթազդելու առիթ մը չէ: Մարդ մը, իբրեւ  
առաջին մարդոյ սերունդ, այնչափ յերկրէ բարձրացած  
չէ՝ մարդոյն Քրիստոսի փոխանորդ դրուելով, որչափ  
Աստուած, իբրեւ երկրորդ մարդ, յերկնից խոնարհած  
է՝ առաջնոյն փոխանորդ մտնելովն եւ անոր բոլոր սե-  
րնդեան համար՝ իր արդարութիւնը փոխարինելով: Ան  
բարձրութիւնն առ խոնարհութեան քով շատ պզտիկ է:

Բայց որովհետեւ դեռ առ փոխանորդութիւնը՝  
վերջապէս Քրիստոսի փոխանորդութիւն կը մնայ, որն  
որ չէ թէ մինակ մարդ, հապա միանգամայն Աստուած  
է, կը միաբանինք յիշեալ խմբագրին հետ ըսելով՝ որ  
ասանկ իշխանութիւն ու պատիւ յափշտակել՝ աշխարհ-  
քիս ամենէն մեծ ամբարշտութիւնն, ամբարտաւանու-  
թեան ծայրն ու ծագն է:

Հոս է տանդուղը՝ ուսկից Մասիս, թէ որ չգթէր,  
կրնար վեր ելլել: Անք՝ իբրեւ քրիստոնեայ, մենք՝ միան-  
գամայն իբրեւ կաթուղիկեայ, ամէնքնիս՝ իբրեւ մարդ,  
թէ դիտենք եւ թէ կը հաւտանք՝ որ մարդկային սեռին  
ու անոր ազատ պատմութեան վրայ հսկող ու տնօրէն  
նախախնամութիւն մը կայ: Թէ որ հռոմէական գահե-  
րիցութիւնը մարդկային շէնք մըն է, ի՞նչ է ասոր ու-  
նոյն նախախնամութեան մէջ մեծ հակասութիւնը, առ  
առեղծուածը, առ տիեզերական պատմութեան անմեկ-  
նելի Սփինքսը, առ այսչափ հազարաւոր տարիներով կե-  
ցած հսկայակերպ ամբարտաւանութեան մը հիմնար-  
կութիւնը. ցե՛րք իր բովանդակ զօրութեան մէջ կը տե-  
ւէ, մեծամեծ քրիստոնէական հանճարներէ հաւտա-  
ցուած, ազգերէ ծառայուած, թագաւորներու հետ  
դաշնադրութեամբք զօրացած. չկայ ժողովուրդ, չկայ  
երկիր՝ ուր բաղմամբոխ հետեւող չունենայ. զարմանք

է իր բոյնը երկրազնդիս ան կողմերուն մէջ աւելի ամբ  
բութիւն ունի՝ ուր աւելի խնացականութիւն, աւելի  
հանձար կայ:

Բայց անկէ աւելի՝ աս կարծուած ամբարտաւանու  
թեան եղջիւրը բուն Աստուծոյ տան, սրբութեան տե  
ղւոյն մէջ կեցած է: Քան զկաթուղիկէ եկեղեցւոյ նուիր  
րապետութիւնը՝ ինչ մեծ ու բարձր բան կայ: Ե վերայ  
այսր ամենայնի՝ ան նուիրապետութիւնը կազմող եպիս  
կոպոսներէն ամէն մէկը՝ զինք իր զրու թեամբ սեպհա  
կան թեմին վրայ տեսուչ դրուած գիտէ, իր իշխանու  
թեան համար այնպէս յերեւելիս Հռոմայ եպիսկոպոսին  
չնորհման, ինչպէս յաներեւոյթս Հոգւոյն սրբոյ կոչման  
զինք պարտական ճանչնալով: Նոյն եպիսկոպոսունքն  
են՝ որ նախ Աստուծոյ սեղանին առջեւ աւետարաններու  
վրայ Հռոմայ եպիսկոպոսին գերագոյն հովուութեան  
դաւանանքը կ'ընեն, որ ետքէն միլիոնաւորներու կրկնել  
տան: Անանկ՝ որ Հռոմայ եպիսկոպոսն երեւելապէս «ի  
վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ» կեցած է. խորհրդոց  
մատակարարութիւն, վարդապետութեան քարոզու  
թիւն, օրինաց դրութիւն ու գործադրութիւն ի վեր  
ջին եւ ի վերին ատենի իրենն է: Ասոնք իրեն համար  
դատարկ պահանջումներ չեն: Անանկ մեծայաղթ (ինչ  
պէս կ'ըսուի՝ յափշտակուած) իշխանութեան՝ որուն ոչ  
պատմութիւն եւ ոչ վիճակագրութիւն հաւասար բան  
մը կը ցուցնէ՝ իրօք անանկ մեծայաղթ հնապանդան  
կամ ստորակարգութիւն մը կը համապատասխանէ, ու  
րուն նոյնպէս օրինակ մը ոչ բռնակալութեանց եւ ոչ  
օրէնսգիտութեանց տարեգիրներն ունին: Բայց ինչո՞ւ  
արդեօք աշխարհքիս ամենէն ժանտ, որովհետեւ՝ ինչ  
պէս կ'ուզուի, ամենէն ամբարտաւան մարդն՝ Աստուծոյ  
Օծելոյն անուամբ այսպէս Աստուծոյ բովանդակ եկե-

դեցւոյն մէջ ունեցած փառաւորութեանց վրայ ճոխացեր բռնացեր է: Ա՛րբ կ'արթըննայ այն Խարայելի անքուն պահապանը, որուն բազուկը՝ միայն մտօք ու սրտիւ ամբարտաւանեալներն ալ կը ցրուէ, հզօրներն աթոռներէն կը քակէ, որն որ բան մը այնչափ սաստիկ չատեր, որն որ բան մը այնչափ շուտ չիպատօժեր՝ ինչպէս ամբարտաւանութիւն:

Ի՛նչ կ'ըսենք պատժել: Ա՛ր (եկեղեցի՛ ըսուած) կրօնական ընկերութիւն կրնայ ցուցընել՝ որ այնպէս Վրիստոսի Հոգին ունի՝ ինչպէս կաթուղիկէ եկեղեցի: Իրմէ դուրս ան բարոյականութեան սաստիճանը պարսպ կը փնտռենք՝ որն որ իրմէ ներս միայն կայ: Մենք չենք ըսեր, չենք կրնար ալ ըսել՝ որ կաթուղիկէ եկեղեցիէն դուրս առաքինութիւն չկայ, կամ թէ կաթուղիկէ եկեղեցւոյ մէջ մոլութիւն չկայ, եւ ոչ ալ կը կարծենք թէ կաթուղիկէ եկեղեցւոյ մէջ գտնուած ամէն առաքինութիւններն անկից դուրս գտնուածներէն միշտ վեր են: Այսչափ մինակ կ'ըսենք. Աս եկեղեցին այնպէս բարձրագոյն կարգի բարոյականութիւն կամ առաքինութիւններ կը ցուցընէ, որոնք իրմէ դուրս անոր համար չեն գտնուիր՝ որովհետեւ սրբարար ու փրկարար զօրութիւնը (չափահասներու համար) հոս ու մինակ հոս գերազանցութեամբ կը գործէ: Ա՛ր այնպէս անցեալ ու ներկայ օրինակներ կան տեսնելու, որ աշխարհային ոգին, մէկ կողմանէ՝ իբրեւ աչաց ու մարմնոյ ցանկութիւն, մէկալ կողմանէ՝ իբրեւ ամբարտաւանութիւն, չէ թէ մինակ պատուիրանաց բարձրագոյն պահպանութեամբ մը կապուած, հապա աւետարանական խրատներու յանձնառութեամբ ընկճած ըլլայ ու անանկով աշխարհ՝ իր հոգւովը, եկեղեցի՛ Աստուծոյ Հոգւովը՝ իրարու ի խաչ ելած ըլլան: Աւաղ, շատերուն դժուար-

խմանալի բաներ կը խօսինք՝ միշտ «Մուխ», մը լսելու վտանգով: Հին քրիստոնեայք մինչեւ ծերակուտի ատենան իբրեւ ատենակալ մտնելով, ամփիթէատրոն ու կրկէս՝ Հեթանոսաց կը թողուին. մեր ծովու եւ ցամաքի նոր քրիստոնեաներուն շատերը՝ Աւրոպայի թէատրոն ու պանդոկ, փողոց ու հրապարակներէն ուրիշ՝ ամէն բան Վաթուղիկէականաց թող տալով, աս եկեղեցւոյն ներքին գործարանաւորութիւնը, բարոյական կենաց խորութիւնն ու սրբութեան նկարագիրն ոչ դիտուած եւ ոչ ըմբռնուած է: Չդեզերինք շատ համեմատութիւններու: Ա՛ր մարմնոյ եւ արեան պատերազմին յաղթութիւնն այնչափ փառաւոր է, Աստուծոյ դառին դրօշն այնպէս շքեղ կը ծփայ: Վաթուղիկէ եկեղեցւոյն յատուկ է՝ որ (յոյն) Հերձուածողներէ ու (բողոքական) Հերետիկոսներէ մեղադրութիւն կրէ՝ թէ ինչո՛ւ շատ կուսութիւն ունի, ինչո՛ւ աս հրեշտակային առաքինութիւնը շատ կը սիրէ: Արօք կրնայ՝ Վաթուղիկէ եկեղեցիէ զատ եկեղեցի մը ցուցնել՝ որ տկար սեռն այսչափ հազարաւոր խումբերով՝ անանկ հինգ զգայարանաց իմաստութենէն շատ վերագոյն իմաստութեամբ մը՝ աւելի երկնից քան երկրի վերաբերի: Չէ չէ. հոս ամբարտաւանութեան ոտքը չկայ, ուր Աստուծոյ մատը կայ:

Թէ որ ամբարտաւան ստութիւն մըն է՝ որ զհռոմէական եկեղեցին աս կերպարանաց մէջ կազմեց, անոր (այսպէս ըսենք) հրապոյրքն ու պատրանքները՝ որոնք մեծ բան սիրել զիացող, իմացականութիւն յարգող, բարոյասէր, անձին փրկութեան ապահովութիւն փրնտուող մարդ մը յաղթահարելու բաւական են, աս պատրանքները, կ'ըսեմ, այնչափ մեծ են՝ որ նախախնամութեան հետ կենալ չեն կրնար: Թէ որ իրօք հռո-

մէական եկեղեցին այն մանանխոյ հատը չէ, որն որ իր երկնաւոր մշակէն այնպէս մեծնայլու եւ ծառանայլու որոշուած էր՝ որ իր ոստերն երկնից թռչուններուն դադար տան<sup>1</sup>, աս Քաբելոնին ու անոր բռնաւորին վրայ այլ շատ չանցած «Թագաւորութիւնդ քենէ անցաւ», մը հնչելու էր. ինչո՞ւ զուարթունք պիտի դանդաղէին հրաման մը տալու՝ որ աս ծառը կտրուի, իր ամէն ճիւղերովն ապականուի<sup>2</sup>:

Ա երջապէս կ'ըսենք. կամ հռոմէական գահերիցութեան հետ՝ նախախնամութիւն վերցրնելու, կամ նախախնամութեան հետ գահերիցութիւն ընդունելու է:

Բայց յիշեալ խմբագիրը (բողոքական) Քարոնիոսէ մը մէկ երկու Հռոմի եպիսկոպոսաց՝ ինչպէս քանի մը սուտ ու քանի մ'առասպելական, ասանկ ալ քանի մը, ինչպէս կ'երեւայ, ստոյգ մեղաց ցանկ մը կը խմբագրէ:  
Պարսպ յոգնութիւն: Արբեք Հռոմայ քահանայապետներն անմեղանչական չենք դաւանած: Իրենց ունեցած անսխալութիւնն իրենց անձանց համար տրուած՝ ոչ ոք կ'ենթադրէ. միայն եկեղեցին սորվեցրնելու մէջ իրենք անսխալ են. իրենց անձնական նաւը կրնան ժայռի զարնել, բայց Պետրոսի նաւուն մէջ՝ ուր Քրիստոս կը նստի ու Հոգին սուրբ կը շնչէ, ղեկը սխալ ուղղել չեն կրնար: Մեզի ցուցրնելու էր թէ ինչ մոլորութիւն ուրիշներուն սորվեցուցին, եւ ոչ թէ ինչպէս իրենք ապրեցան:

Ասոնք Հռոմայ եպիսկոպոսաց փառաւոր ցանկին մէջ արատներ են՝ որոնցմէ երկրիս լուսաւոր արեւն ալ սողատ չէ: Բայց կարծելը՝ թէ ան երեւոյթները հռոմէական եկեղեցւոյ հոգւոյն կը վերաբերին՝ ան ժամա-

<sup>1</sup> Մարկ. Գ. 31. 32: Ղուկ. ԺԳ. 19:

<sup>2</sup> Գանիէլ, Գ:



նակներուն պատմութեան բոլորովին անտեղեակ ըլլալու  
ապացոյց մըն է: — Մենք “Շնորհալիներու,” ակթորը  
կը յարգենք. բայց ան ակթորը միշտ Շնորհալիներ  
բռնեցին:

Աթէ ունանք կ'ուզեն յարատեւել ըսելու՝ թէ միշտ  
“մեր գեղացի, պարզ ու համեստ քահանան մեզի Հռո-  
մայ եպիսկոպոսներէն անհամեմատ թէ կարողագոյն ու  
թէ պատուականագոյն է,” մենք առակին հետեւե-  
լով՝ ակթորժակներու վրայ չենք վիճեր:

Բայց ո՞վ դարձեալ կը ստիպէ Առասաւորչեանք,  
Ներսիսեանք ու Գրիգորեանք թողուլ՝ որպէս զի Հռո-  
մայ քահանայապետներն ընդունին. մենք դեռ ասոր  
ներհակ չենք ըմբռնած՝ թէ ինչպէս անոնք առանց ա-  
սոնց կ'ընդունուին:

Հաւատաքննութիւնը, ինչպէս մեր խմբագիրք  
կ'անուանեն, զիրենք շատ ահաբեկ ըրած է. կը կարծէ  
Մասիս որ Պիոս նոյն խարոյկներուն դարը դարձընել  
կ'ուզէ: Հասարակաց տեղիք մ'ալ՝ որն որ մինչեւ ցձան-  
ձրոյթ գործածուեցաւ: Ո՞վ ան տեսակ խուզարկութեան  
(էն+իպէսիոնի) բարեկամն է. ամէն ժամանակ իր սխալն  
ունի: Բայց երբ արդեօք գոնէ պատմական ուսման մէջ  
այնչափ պիտի յառաջանանք, որ իմանանք թէ Սպա-  
նիական խուզարկութիւնը՝ միայն Սպանիայի յատուկ  
էր, եւ թէ խուզարկութիւնն աս վայրենացած կերպին  
մէջ ամէն տեղ աւելի աշխարհական՝ քան թէ եկեղե-  
ցական իշխանութեան գործն էր. որովհետեւ ժամանա-  
կին հոգւոյն համեմատ, եկեղեցական ապստամբութիւ-  
նը՝ քաղաքայինը դրեթէ միշտ զուգընթաց ունենալուն,  
աշխարհական բազուկը կարծեց որ քրիստոնէութիւնն  
անքրիստոնեայ եղանակաւ պաշտպանելու իրաւունք ու-  
նենայ: Չիմտածուիր որ նոյն իսկ Հռոմայ քահանայա-

պետք էին<sup>1</sup>, որոնք ամենէն աւելի իրենց կոնդակներու մէջ ու հրամաններով արդելքներ ու չափաւորութիւններ դնելով՝ ասանկ խուզարկութեանց հակառակ կ'աշխատէին :

Չորս դինիս, ինչպէս կ'ուզուի, վարդագոյն լոյս ճապաղեր է, անշուշտ մինակ ուրիշին աչքին շիւղը՝ առանց մեր աչքին դերանին՝ տեսնելու համար չէ : Թէ որ մեր սեպհական եկեղեցական պատմութիւնը քիչ մը թղթատէինք, ասանկ լիաբերան չէինք կրնար խօսիլ : Աստիալէն Հայաստան ազատ չէ . հոս աս խարոյկն անանկ անձինք վառած են, անանկ գրիչներ ալ միջինդարեան սկզբամբ մը պաշտպանած են<sup>2</sup>, որոնք իրաւամբք մեր լիութիւնը կը վայելեն : Իննե-ասանկերորդ դարն ալ հաւատաքննութիւն մ'ունի . բայց մենք չենք ուզեր դեռ այն չլուծուած խնդրով զմեզ յոգնեցընել թէ ինչպէս կ'ըլլայ՝ որ անոնցմէ հաւատաքննութեան համար ամբաստանուինք՝ որոնց հաւատաքննութեան սպիւները դեռ կը կրենք :

Թէ որ Հայոց ազգը՝ որուն բերան կ'ըլլայ Մասիս, հարցընէ՝ թէ «ասպագային մէջ գործուելու մեղաց կանխաւ թողութիւն տալու իշխանութիւնն ո՞վ Հռոմայ տուեր է», մենք կը դառնանք իրեն հարցընելու՝ ո՞վ

<sup>1</sup> Ինչպէս Լեւոն Ժ., Գրիգոր ԺԳ., Պաւղոս Գ. եւ այլք :

<sup>2</sup> Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր (Սուրբն Մեսրոպ) զգժպատեհ եւ զկամակոր Բարբարիանոս աղանդն քննելոյ . եւ իբրեւ ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ դաւազանն, ծանրագոյն պատուհասիք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս : Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապախան-

ձեալս, մրեալս եւ դունակ դունակ խայտառակեալս եւ յաշխարհէն կորզէին : Արեւ., էջ 18 :

«Հրամայէ (Սուրբն Սահակ՝ Մեսրոպայ) քննել զժանդագործ Բորբորիտոնան, եւ եթէ ոչ հեզութեամբ եւ ոչ սաստիւ գայցեն յուղղութիւն, չարչարանօք հալածել . զի թշնամանք ի թշնամանաց վրէժառնուցուն, եւ խայտառակեցի մահուամբ անիրաւ մահ ոգւոյն» : Մ. Լ. Խորեհայի, Գեր+ Գ. ԳԼ ԾԸ :

գործածեր է: Բայց եթէ շուկայի աստուածաբանու-  
 թիւն մը դարձեալ հարցընէ թէ «Աստուծոյ արքայու-  
 թենէն կանգնով երկիր ծախելու հրամանն», ինչպէս  
 ունեցեր է, եթէ ասով մեր ներողութեան վրայ ունե-  
 ցած վարդապետութիւնը կ'ակնարկուի, կ'ըսենք թէ այն  
 Պետրոսի տրուած բանալիներով ունի, որոնք Վրիս-  
 տոսի Տեառն մերոյ Հօրը տան մէջ բազմաթիւ օթեւան-  
 ները թէ կրնան բանալ, թէ կրնան գոցել: Թէ որ աս  
 հարցմանց հեղինակն իբրեւ ճշմարիտ քրիստոնեայ (չժա-  
 ոանդուած՝ հապա անձամբ գործուած) մեղքէ մը ե-  
 տեւ՝ այնպէս անդին դժոխք ու քաւարան զատէր,  
 ինչպէս ասդին զղջում եւ ապաշխարութիւն զանազա-  
 նէր, ան ատեն կրնար խմանալ թէ ինչ է կաթուղիկէ  
 հռոմէական եկեղեցւոյ մէջ (խորհրդական) արձակման  
 ու ներողութեան բաժանումը, եւ թէ ինչպէս ասոնց  
 առջինը՝ մեղք, չէ թէ միշտ ու բոլոր պատիժ կը  
 թողու, եւ երկրորդն՝ ասոր ներհակ պատիժ՝ ոչ եր-  
 բեք մեղք կը ներէ. թողութիւնը ներողութիւնը չեն-  
 թաղրեր նէ՝ ներողութիւնը միշտ թողութիւնը կ'են-  
 թաղրէ:

Անքենք աս հարցումները՝ որոնք շատ պղտոր աղ-  
 բիւրէ կ'երեւան, թէ որ չենք սխալիր՝ Միասիսիփիի  
 լճակներէն. ինչ որ ըլլայ՝ ստուգիւ ան եկեղեցւոյն  
 հարցումները չեն՝ որուն Մասիս «զաւակ ըլլալու բարե-  
 բախտութիւնն ունեցեր է», : Հայոց՝ Հռոմէական հա-  
 ղորդութենէն դուրս կեցող եկեղեցին՝ զմեզ այսչափ  
 մոլորած, այսչափ ապականած չիսեպեր, մանաւանդ թէ  
 կը կարծէ որ ինք ամէն բան մեզի համաձայն հաւտայ: Աս  
 համոզումն անոնց սրտին անշուշտ պատիւ կ'ընէ, եւ  
 թէպէտ իրն, այս ինքն՝ երկու կողման մէջ եղած էական  
 տարբերութիւնը չփոխէ, միշտ դեղեցիկ կայծ մըն է,

ուսկից աներեւոյթ ձեռք մը, թէ որ անանկ հաճի,  
 կրնայ իրենց խորաններուն վրայ եօթը ճրագները նորէն  
 վառել. միայն թէ նոյնը խոնարհութեան մոխրով պա-  
 հուի, աղօթքի շնչով արծարծի. ան ատեն մինակ  
 կրնանք յուսալ որ երբեմն ամէնքնիս ի Վրիստոս միա-  
 բանինք ըսելու «Նա փառք յեկեղեցւոջ»,<sup>1</sup>:

1 Եփես. Գ. 21:



№ 243

